

ԳՐԻԿՈՐ ԴԱՐԱՆԱՎՅՈՒՆ Մ. ԶԱՄՉՅԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐ

Ա. Ա. ՈՒԹՈՒՋՅԱՆ

XVI դ. վերջին և XVII դ. սկզբին Հայաստանում մոլեզնող երաշտի, սովի, ինչպես նաև ջալալների ապստամբության սկզբնական շրջանի պատմության համար որպես սկզբնաղբյուր Միքայել Զամչյանն օգտագործել է ականատես Գրիգոր արքեպիսկոպոսի Տարեգրությունը: Զամչյանն ընդամենը երկու անգամ է անդրադարձել սույն հեղինակին և երկու դեպքում էլ նշել է իր սկզբնաղբյուրը՝ «...որպէս աւանդէ Գրիգոր արքեպիսկոպոսականատես ի տարեգրութիւնս իւր», «...ասէ Գրիգոր արքեպիսկոպոսականատես ի տարեգրութիւնս անժանոթ է XVI—XVII դդ. ստեղծագործած Գրիգոր արքեպիսկոպոսականատես ժամանակագիր, որին կյանքի է կոչել Մ. Զամչյանը:

Զամչյանի բերած մեջբերումների քննությունից պարզվում է, որ դրանք Գրիգոր վարդապետ Դարանաղցու ժամանակագրության համապատասխան հատվածներն են: Սակայն համեմատությունները ցույց են տալիս, որ Զամչյանն իր ձեռքի տակ չի ունեցել Դարանաղցու ժամանակագրության ամբողջական ձեռագիրը և որ նրան անժանոթ է Գրիգոր Դարանաղցի պատմիչը: Ուստի հարց է ծագում. Զամչյանը որտեղից է վերցրել Դարանաղցու ժամանակագրության համապատասխան հատվածները և ինչու է շփոթել հեղինակին:

Հայտնի է, որ Դարանաղցին նշված աշխատությունը գրել է 1634—1640 թթ., երբ վարում էր Ռոդոսթոյի (Թեքիրդաղ) հայկական գաղութի վիճակավորի պաշտոնը: Դեռևս XVII դ. նրա ձեռագրի միակ օրինակն անհետանում է Ռոդոսթոյից:

XIX դ. սկզբներին կորած ձեռագիրը հայտնվում է Երուսաղեմի ս. Հակոբյանց վանքի Մատենադարանում: Դարանաղցու աշխատությունը հայագիտությանը հայտնի դարձավ միայն XIX դ. 60-ական թվականների կեսերին Տ. Սավալանյանցի հրապարակած հոդվածաշարով³: Հոդվածագիրը բերում է Ռոդոսթոյի հայոց գաղութի սկզբնավորման շրջանի պատմության վերաբերյալ Դարանաղցու հաղորդած որոշ տեղեկություններ, նշելով որ հեղինակը «ժամանակակից և ականատես պատմիչ է»⁴: Դրանից հետո էլ Դարանաղցու աշխատությունը շարունակում է մնալ անմատչելի, նրանում արծարծված հարցերը՝ գրեթե չբացահայտված: Անգամ կարծիքներ եղան, թե Դարանաղցու երկը կորած է: Թ. Աճեմյանը գրում է. «Ձեռագիրը այժմ կորսված է ան-

1 Մ. Զամչյան, Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն 1784, Կ. Գ. Վենետիկ, 1786, էջ 535, 536 (այսուհետև՝ Մ. Զամչյան):

2 «Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Դարանաղեցու կամ Կամախեցու, Երուսաղեմ, 1915, էջ ԿԴ (այսուհետև՝ Գ. Դարանաղցի), Ն. Պողոսյան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Կ. Գ. Երուսաղեմ, 1969, էջ 96:

3 «Սիոն», Երուսաղեմ, 1866, հոկտեմբեր, էջ 147—150, 167—171:

4 Նույն տեղում, էջ 147:

հետ, ապարդյուն թողլով զայն վերագտնելու ամեն ճիգ, հորդոր և ջանք»⁵։ Այդ իսկ պատճառով հայագետները որոշ դեպքերում Դարանաղցու երկի այլուր հանգիստող հատվածների հեղինակ էին համարում ուրիշներին։ Այսպես, Ա. Տեր-Միքելյանը Սամվել Անեցու ժամանակագրության հավելվածում ղեկավարելով Դարանաղցու խմբագրած «Թարեխ Տաճկաց» հատվածը, թյուրիմացաբար նրա հեղինակ է համարում Գրիգոր Կեսարացուն⁶։ Իսկ հայ մատենագրության բազմահմուտ հետազոտող Ղ. Ալիշանը կարծում է, թե Գրիգոր Դարանաղցին XVI դ. երկրորդ կեսի հեղինակ է, որը «Պարսից շահ Թահմասլի Սամանյանց հետ ըրած կռիվները պատմած է»⁷։ Իսկ մի այլ կապակցությամբ, բերելով XVI դ. վերջերին Հայաստանում մոլեգնող սովի մասին Դարանաղցու ընդարձակ վկայությունը, Ալիշանը նշում է, որ դրա զգուշ է Գրիգոր ում, որ քանի մի տարվան ազգային քաղաքական դիպվածները նշանակներ է իբրև պարզ ժամանակագրական կերպով⁸։ Ինչպես տեսնում ենք, Ալիշանը տարբերում է Գրիգոր Դարանաղցուն «Գրիգոր ում»-ից, մինչդեռ դրանք միևնույն անձնավորությունն են։ Դարանաղցու անձնավորության և նրա երկասիրության շուրջ ստեղծված շփոթը հիմնականում վերանում է 1907 և 1911 թթ. այդ խնդրի մասին գրված հոդվածաշարից հետո⁹։ Միայն դրանից հետո լույս տեսած մասնագիտական մի շարք երկասիրութայիններում որոշվում են Դարանաղցու անձնավորության և նրա ժամանակագրության հետ կապված որոշ հարցեր¹⁰։ Վերջապես 1915 թ., Երուսաղեմում, Մ. Նշանյանի հմտալից առաջաբանով, լույս է տեսնում Դարանաղցու ժամանակագրությունը։ Այդ հրատարակությամբ պարզվեց, որ XVI դ. վերջերին Հայաստանում եղած սովի մասին Չամչյանի, Տեր-Միքելյանի և Ալիշանի վկայությունները Դարանաղցու երկասիրության համապատասխան հատվածի ընդօրինակություններն են։ Այժմ գիտությունը հայտնի են Դարանաղցու ժամանակագրության, ինչպես այս (երաշտի ու սովի հատվածների), այնպես էլ այլ մասերի ուրիշ ընդօրինակություններ¹¹, որոնք հրատարակվել են Գ. Հովսեփյանի, Վ. Հակոբյանի և Ն. Պողարյանի աշխատասիրությամբ։ Դրանց ճշող մասը Դարանաղցու երկասիրության սկզբում գտնվող ժամանակագրական երեք փոքրիկ բնագրերն են և 1600 թ. սովի մասին վկայությունը։ Ժամանակագրական այդ երեք բնագրերը Դարանաղցունը չեն, իր իսկ վկայությամբ՝ նա դրանց խմբագրողն է միայն. «...գտաք այսպէս դրեալ յոմանց յայլ եւ այլ գրեմաց եւ ժողովեցաք ի մի վայր հաւաքելով քաղում աշխատանօք եւ մեծաւ ջանիւ»¹²։ Այդ բնագրի քրն-

5 «Բիւղանդիոն», 4. Պոլիս, 1903, № 2154։

6 «Սամուէլի քահանայի Անեցոյ հավաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 301, ծանոթ. 98։

7 Ղ. Ալիշան, Հայագատում, մասն Ա, Վենետիկ, 1901, էջ 131։

8 Նույն տեղում, մասն Բ, էջ 597, ծանոթ. 5։

9 «Բիւղանդիոն», 1907, № 3187, «Հանդէս ամսօրեայ», 1911, № 1, էջ 4—14։

10 Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, 4. Պոլիս, 1914, էջ 2309, 2317—2318, Ա. Զամինյան, Հայ գրականության պատմություն, հ. Ա, Նոր-Նախիջևան, 1914, էջ 238—239։

11 Գ. Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 205—214, Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հ. II, Երևան, 1956, էջ 256—261, Ն. Պողարյան, նշվ. աշխ., հ. Գ, 1968, էջ 291, 529, հ. Դ, էջ 378։

12 Դարանաղցի, էջ 13։ Լ. Աճառյանի այն պնդումը, թե Դարանաղցու խմբագրած «Թարեխ Տաճկացը» ժամանակագրությունից անկախ մի գործ է, զուրկ է որևէ հիմքից (Լ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, 1942, էջ 626)։

նության հիման վրա Վ. Հակոբյանն իրավացիորեն եզրակացրել է, որ դրանք նախագաղափար օրինակ են ծառայել Մաշտոցի անվան Մատենադարանում, ինչպես նաև Վիեննայի, Երուսաղեմի ու Լոնդոնի ձեռագրատներում պահվող հայերեն չորս գրչագրերում գտնվող մի խումբ համառոտ ժամանակագրությունների համար¹³։ Մեր նպատակը չէ կանգ առնել Գր. Դարանաղցու խմբագրած ժամանակագրական այդ բնագրերի վրա, սակայն մեզ հետաքրքրում են դրանց շարունակությունը կազմող, Դարանաղցու գրչին պատկանող, 1599—1600 թթ. սովի մասին հատվածի ընդօրինակությունները, որոնցից մեկը օգտագործել է նաև Չամչանը։

Այն հանգամանքը, որ Դարանաղցուց կատարված բոլոր հայտնի ընդօրինակությունները¹⁴ սահմանափակվում են միայն նրա ժամանակագրության 1—23 պարագրաֆներով, ենթադրել է տալիս, որ հեղինակը դրանք նախապես է շարադրել-խմբագրել, իսկ այնուհետև թողել անավարտ։ Հետագայում, ձեռնամուխ լինելով ամբողջական ժամանակագրության շարադրմանը, Դարանաղցին օգտագործել է նաև նախագաղափար օրինակը՝ կատարելով փոփոխություններ։ Ուրեմն, վերոհիշյալ բոլոր ընդօրինակությունները, այդ թվում և Չամչանի օգտագործածը կատարվել են Դարանաղցու անավարտ մնացած նախագաղափար օրինակից։ Այս ենթադրության օգտին են խոսում հետևյալ փաստերը. 1599—1600 թթ. սովի ու երաշտի մասին Դարանաղցու վկայության հրատարակված հատվածների վերջում հեղինակն իր մասին գրում է. «Ես Գրիգոր քանի խնդրողս...»¹⁵։ Նույն հատվածը Դարանաղցու ժամանակագրության մեջ ձևակերպված է այսպես. «Ես Գրիգոր Դաւանաղցի՝ սպասավոր գրոցի վերջին խնդրողաց բանին»¹⁶։ Ուրեմն, մեզ հետաքրքրող հատվածը չէր կարող ընդօրինակված լինել մայր օրինակից։ Հակառակ դեպքում անբացատրելի կմնար, թե ինչու՞ բոլոր ընդօրինակողները շահագրգռված էին չհիշատակել հեղինակին։ Հենց դրանով պետք է բացատրել, որ Դարանաղցու խնդրո առարկա հատվածի տարբերակներից օգտվող ուսումնասիրողները նրա հեղինակ են համարում ինչ-որ Գրիգորի, քայքայ ոչ երբեք Գր. Դարանաղցուն։ Այսպես, օրինակ, Չամչանը հեղինակ է համարում Գրիգոր արեղային։ Դրա համար Չամչանը գուցե հիմք ուներ. թերևս նրա ձեռքի տակ եղած օրինակում եղել է նաև 1509 թ. արեղակի խավարման նկարագրության հատվածը, որտեղ հեղինակը գրում է, թե այդ տարի իրեն «մանուկ գոլով չորեք տասնամեայ՝ բռնութեամբ արեղայ օրհնեցին»¹⁷։

Խնդրո առարկա հատվածը Սրապիոն Ուռհայեցու աշակերտ Գրիգոր Կեսարացու գրչին պատկանելու Տեր-Միքելյանի պնդումը զուրկ է հիմքից։ Նրան

13 Վ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 256, նաև ծանոթ. 1։

14 Բացառությամբ Երուսաղեմի ս. Հակոբյանց վանքի Մատենադարանում գտնվող № 961 ձեռագիր «Հարանց Վարքի» 789ա էջից սկսվող «Պատմութիւն Կոստանդինապոլսոյ, որ եղել յամս Սուլթան վերջնոյն Մուրատին...», խորագիրը կրող գլխի, որը ձեռագրի մեջ կարող էր մուծվել միայն 1632 թ., գուցե և ավելի ուշ (Ն. Պողոսյան, նշվ. աշխ., հ. Գ, էջ 528—529, հմտ. Գ. Դարանաղցի, էջ 543, § 167)։

15 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 7273, էջ 71բ, ձեռ. № 1151, էջ 226ա, Ս. Անեցի, էջ 203, Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 212, Ն. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 291։

16 Գ. Դարանաղցի, էջ 39 (այս և հետագա ընդձուները մերն են)։

17 Գ. Դարանաղցի, էջ 22։

շփոթության մեջ է գցել այն հանգամանքը, որ, ինչպես տվյալ հատվածի հեղինակը, այնպես էլ համանուն վարդապետ Կեսարացին աշակերտել են «քաջ հոետոր» հորջորջված Սրապիոն վարդապետին: Իրոք, Գրիգոր Կեսարացին աշակերտել է Սրապիոն վարդապետ (հետագայում կաթողիկոս) Ուռհայեցուն¹⁸: Սակայն, ինչպես հայտնի է, Գրիգոր Դարանաղցին եղել է ոչ թե նրա, այլ Սրապիոն Բաբերդցու աշակերտը¹⁹: Ուստի, Դարանաղցու «եռամեծ, տիեզերալույս, քաջ հոետոր» կոչած Սրապիոնը ոչ թե Ուռհայեցին է (ինչպես կարծում են Տեր-Միքելյանը և Հ. Աճառյանը)²⁰, այլ համանուն վարդապետ Բաբերդցին:

Մ. Չամչյանը, Հովանիսիկ (Հովհաննես) Ծարեցու ժամանակագրությունից քաղելով 1583—1585 թթ. պարսկա-օսմանյան պատերազմների մասին վկայությունները, գրում է, թե տարիներ անց օսմանյան զորապետ Ջաֆար փաշան ձերբակալեց Վրաստանի թագավոր Սիմոնին և նրան ուղարկեց Կ. Պոլիս, ուր և գերի թագակիրը մահացավ բանտում: Սակայն վերջին մանրամասնության համար Ծարեցին չէր կարող լինել Չամչյանի սկզբնաղբյուրը այն պարզ պատճառով, որ նրա ժամանակագրությունն ավարտվում է 1600 թ. դեպքերի նկարագրությամբ, երբ Ջաֆար փաշայի կողմից Կ. Պոլիս առաքված թագավորը, ջալալիների ապստամբության հետևանքով «յարգելեալ կայ ի Յարգրում քաղաքի»²¹: Հավանաբար Չամչյանի համար աղբյուր է ծառայել Դարանաղցու նախադադարի օրինակի այն ընդօրինակությունը, որը եղել է նրա ձեռքի տակ: Համեմատությունը ցույց է տալիս, որ Չամչյանի օրինակը ընդհանուր գծերով համերաշխվում է Դարանաղցու աշակերտ Մինասի 1635 թ. ընդօրինակած և այժմ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող № 7273 ժողովածուի մեջ տեղ գտած Դարանաղցու ժամանակագրության մեղ հետաքրքրող հատվածներին, ինչպես նաև Տեր-Միքելյանի և Գ. Հովսեփյանի հրապարակած տարբերակներին:

Ջեռագիր № 7273

«Նա (Ջաֆար փաշան—Ա. Ու.) ըմբռնեաց զթագաւորն վրաց՝ զՍիմոն խանն աշխարհն իւր և տարաւ ի Կոստանդնուպօլիս և է ի մետաղս մինչև ցայսաւր» (էջ 68ա):

Մ. Չամչյան

«... գնացեալ ի վերայ նորա (Սիմոն թագավորի—Ա. Ու.) Ճաֆէր փաշայ՝ կալաւ զնա և յղեաց ի Կոստանդնուպօլիս, ուր եղաւ նա յարգելանս...» (էջ 532):

Սակայն համեմատությունը ցույց է տալիս, որ հրատարակված տարբերակներում պակասում են Սիմոնի գերի ընկնելու մանրամասները և բան-

¹⁸ Մ. Չամչյան, էջ 537, Մ. Օրմանյան, նշվ. աշխ., էջ 2308, ն. Պողարյան, Հայ դրոշներ, Ե—ժէ դար, Նրուսաղեմ, 1971, էջ 500:

¹⁹ Գ. Դարանաղցի, էջ 36, 39—40, 57 և հտ., Հ. Տաշյան, Յուզակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Միթարեանց ի վիճենա, հ. Ա, Վիճենա, 1895, էջ 409, Գ. Գալեմբարյան, Հովհաննես եպիսկոպոս խուլ. պատրիարք Կ. Պոլսո (աշխատություն, 1911, № 1, էջ 6), Մ. Օրմանյան, նշվ. աշխ., էջ 2309, ն. Պողարյան, նշվ. աշխ., էջ 516:

²⁰ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 625:

²¹ Վ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 249:

տում նրա անցկացրած տարիների նկարագրությունը, որոնք կան Դարանաղցու մայր ձեռագրում²²։ Այնուհետև, ինչպես № 1151 և № 7273 ձեռագրերում, այնպես էլ Գ. Հովսեփյանի հրատարակությունում ոչինչ չի ասվում Սիմոնի սպանության մասին, ընդհակառակը, նշվում է, որ նա «...է ի մետաղս մինչև ցայսար»²³։ Մինչդեռ Դարանաղցու մայր ձեռագրում հստակորեն նշվում է. «Եւ Լդեւ վախճան նորա (Սիմոնի—Ա. Ու.) թվ. ՌԾէ (1608)»²⁴։ Նշանակում է ամենաուշը 1608 թ. (Լրբ սպանվել է վրաց Սիմոն թագավորը) կարող էր գրվել Դարանաղցու մայր ձեռագրի նախագաղափար օրինակը, այլասիւս աչնտեղ թագավորի մասին չէր խոսվի որպես կենդանի մարդու։ Ի միջի այլոց, Զամչանի նույնպես գրում է, թե Սիմոնը սպանվել է բանտում²⁵, սակայն նա չէր կարող օգտված լինել Դարանաղցու աշխատության իր ձեռքի տակ Լդած ընդօրինակությունից, որովհետև, ինչպես տեսանք, այն գրվել է մինչև 1608 թ.։ Զամչանն այդ տեղեկությունը կարող էր քաղել այլ աղբյուրներից։ Նախագաղափար օրինակի դոկումենտն օգտին է խոսում նաև Սրուսաղևմի Ա. 1232 ձեռագիր ժողովածուի 1—25 պարագրաֆների ըննությունը։ Ն. Պողարյանի կարծիքով՝ ժողովածուն ընդօրինակվել է Ժէ դարում²⁶, բայց կոնկրետ երբ և ում կողմից, հայտնի չէ։ Դարանաղցու ժամանակագրության նախագաղափար օրինակից կատարված մեղ հայտնի ընդօրինակությունների մեջ սա ամենաընդարձակն է, հասնում է մինչև «դարձեալ թվ. ՌԾԶ (1607) որ եղեալ է, պատմեաց մեզ այս Թորոսս...» տողով սկսվող հատվածը²⁷։ Ի տարբերություն մյուս բոլոր ընդօրինակությունների, սա, ինչպես և Դարանաղցու աշխատության մայր ձեռագիրը, սկսվում է «Թուականաբար վիպասանաբար շարագրութիւն և պատմութիւնը ժամանակաց կարճ ի կարճոյ ժամանակաց անցելոյ...» հատվածով։ Տ. Սավալանյանցը այն կարծիքին է Լդլ, որ այս ձեռագիր ժողովածուի 80ա—93ա էջերում զետեղված ժամանակագրությունը Դարանաղցու երկասիրության նախագաղափար օրինակն է։ Սեւ ամենից ավելի հետաքրքրում է Սավալանյանցի այն պնդումը, որ թէ՛ № 1232 ժողովածուի մեջ գտնվող ժամանակագրությունը և թէ՛ Դարանաղցու մայր ձեռագիրը (որն, ինչպես հայտնի է, ինքնագիր է) գրված են միևնույն ձեռքով. «Օրինակս (№ 1232 ժողովածուի մեջ գտնվող ժամանակագրությունը—Ա. Ու.) բոլորադիր է առաջին գաղափար դրեալ ձեռամբ իւրով (Դարանաղցու—Ա. Ու.), յորմէ ապա ընդարձակեալ է եւ ի կարգի հղեալ, որպէս տեսցես ի համար 1069 (Դարանաղցու մայր ձեռագիրը—Ա. Ու.)։ Իսկ այս գործ թերի թողեալ է, թերեւս առ ի գրել զընդարձակն, որոց երկուցն գրչութիւն միեւնոյն է»²⁸։ Ուստի, հենվելով Տ. Սավալանյանցի հաղորդման վրա, կարելի է այնպիսի, որ նրուսաղեմի ս. Հակոբյանց վանքի Մատենադարանում գտնվող № 1232 ժողովածուի 80ա—93ա էջերում զետեղված ժամանակագրությունը իրոք Դարանաղցու

22 Գ. Դարանաղցի, էջ 30—31։

23 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 1151, էջ 325ա, № 7273, էջ 68ա, Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 210։

24 Գ. Դարանաղցի, էջ 31։

25 Մ. Զամչան, էջ 532։

26 Ն. Պողարյան, Մայր ցույցակ հայերեն ձեռագրաց, հ. Գ, էջ 377։

27 Գ. Դարանաղցի, էջ 49, հմմտ. Ն. Պողարյան, նշվ. աշխ., էջ 379։

28 Ն. Պողարյան, նշվ. աշխ., հ. Գ, էջ 376։

նաղցու երկասիրության նախագաղափար օրինակն է: Այս ամենից հետո կասկած չի մնում, որ մեզ հետաքրքրող բոլոր ընդօրինակությունները կատարվել են այդ նախագաղափար օրինակից կամ երկրորդվել միմյանցից: Մեր կարծիքով, Դարանաղցին ժամանակագրության վրա սկսել է աշխատել դեռևս Բարդի Վահանաշեն վանքում ապաստանած տարիներին (1603—1605) և ավարտել է (ավելի ճիշտ՝ թերի է թողել) թերևս Կ. Պոլսում բնակություն հաստատած տարիներին (1607—1608), մինչև վրաց Սիմոն թագավորի մահը:

Ըստ եղած տվյալների՝ Դարանաղցու նախագաղափար օրինակի առաջին ընդօրինակողն է նրա աշակերտ Մինասը²⁹, Դեռևս 1635 թ., այսինքն այն ժամանակ, երբ Դարանաղցին նոր էր սկսել աշխատել մայր ձեռագրի վրա, Մինասը երկրորդում է իր ուսուցչի խմբագրած ժամանակագրական երեք բնագրերը և 1599—1600 թթ. սովի մասին վկայությունը՝ դրանք զետեղելով իր արտագրած ժողովածուի մեջ³⁰: Մեզ հետաքրքրող հատվածներին՝ Մինասի կատարած ընդօրինակության և № 1151 ձեռագրի նույն հատվածների, ինչպես նաև Գ. Հովսեփյանի հրատարակած տարբերակի համեմատությունը ցույց է տալիս, որ Մինասի ընդօրինակության մեջ պակասում է «Զորորդ մասն աշխարհիս ապականեալ է...» արտահայտությունը սկսվող ընդարձակ հատվածը³¹, Հետաքրքիր է, որ Չամչյանի օգտագործած Դարանաղցու նախագաղափար օրինակի տարբերակում վերոհիշյալ հատվածը հար և նման է Տեր-Միքելյանի (№ 1151 ձեռագրից) և Գ. Հովսեփյանի հրատարակած տարբերակների համապատասխան հատվածներին: Այս փաստը խոսում է այն մասին, որ, ինչպես Չամչյանի, այնպես էլ Տեր-Միքելյանի և Գ. Հովսեփյանի օգտագործած տարբերակները չէին կարող ծագել Մինասի կատարած ընդօրինակությունից (ձեռ. № 7273): Հետևաբար, համամիտ չենք Վ. Հակոբյանի այն կարծիքի հետ, թե № 1151 ձեռագրի մեղ հետաքրքրող հատվածը գեղատեսիլ է Գ. Կամախեցու օրինակից Մինասի վերցրածի մի տարբերակը³², Հիշյալ հատվածների համեմատությունը ցույց է տալիս, որ Չամչյանի օգտագործած օրինակը և № 1151 ձեռագրի տարբերակը, ինչպես նաև Գ. Հովսեփյանի հրատարակած ընդօրինակվել են Դարանաղցու նախագաղափար շարադրանքից երկրորդված միևնույն օրինակից³³: Այս ենթադրության օգտին են խոսում նաև ստորև բերվող հատվածների համեմատությունը:

29 Վ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 259:

30 «Ծուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», հ. Բ, Երևան, 1970, էջ 497:

31 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 7273, էջ 71ա—71բ, հմմտ. ձեռ. № 1151, էջ 226ա, Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 212 և այլն:

32 Վ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 259:

33 Մեզ հայտնի չէ, թե ե՞րբ են ընդօրինակվել Մ. Չամչյանի և Գ. Հովսեփյանի օգտագործած տարբերակները: Սակայն № 1151 ձեռագրի տարբերակը, ինչպես տեղեկանում ենք 162ա էջում գրչի թողած հիշատակարանից, ընդօրինակվել է 1693 թ., Կ. Պոլսում՝ Կոմիտաս Քենոսուրյանի կողմից: Ի դեպ, սխալվում են Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրացուցակի կազմողները, երբ բացի Քենոսուրյանից № 1151 ժողովածուի գրիչ են համարում նաև Գրիգոր Դարանաղցուն, կարծելով թե ձեռագրի 226ա էջի «Ես Գրիգոր բանի խնդրոս...» հատվածը Դարանաղցուն հիշատակարանն է («Ծուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», հ. Ա, Երևան, 1965, էջ 488): Սակայն արդեն տեսանք, որ ինչպես այս հատվածը, այնպես էլ ձեռագրում տեղ գտած մեզ զբաղեցնող ժամանակագրությունը Դարանաղցու նախագաղափար օրինակից է երկրորդված:

Անուագիր № 1151

«... չորրորդ մասն աշխարհիս ապականեալ է ի բազում հինիցն իսմայէլացւոց, անտէրունչ է ամենայն աշխարհի, և ամենայն ոք մոլորեալ են որպէս ոչխար, որ ոչ իցէ հովիւ. և ոչ գոյ միսիթարութիւն յումեքէ և ոչ ոք, որ ժողովէ զցրուեալս ի մի, և յամենայն կողմանց նեղութիւն պատեալ զմեզ. և վճարեցաւ բանն Յեսայի մարգարէի, որ ասէ՝ ահ գութ և որոգայթ ի վերայ ձեր բնակիչք երկրի...» (էջ 226ա)։

Մ. Չամչյան

«... չորրորդ մասն աշխարհիս ապականեալ է ի բազում հինից ալ ազգեաց. անտէրունչ է ամենայն աշխարհ, ամենքին իբրև ոչխարք մոլորեալք, որոց ոչ հովիւ է տածիլ՝ և ոչ միսիթարութիւն ուստեք, և ոչ՝ որս ժողովէ ղցրուեալս ի մի յամենայն կողմանցն նեղութիւն պատեալ է զմեօք, և ահա վճարեալ է բանն Եսայայ. ահ, գութ՝ և որոգայթ ի վերայ ձեր բնակիչք երկրի»։ (էջ 536)։

Գր. Դարանաղցի
(Ժամանակագրութիւն)

«... երրորդ մասն աշխարհիս ապականեալ էր ի վաղուց հետե յայլագեմ ազգաց օտարոտաց խուժականաց։

Եւ արդ այժմն առկաւ մնացեալն կրկին ապականեցաւ ի հինից իսմայէլացւոյն. որ անտէրունչ էին յայնժամ ամենայն աշխարհք եւ ամենայն ոք մոլորեալ են եւ ցրուեալք որպէս զոչխար կորստական, որ ոչ իցէ հովիւ, մանավանդ ազգս Հայոց, որ ոչ գոյր միսիթար յումեքէ եւ ոչ ոք էր որ ժողովէր ղցրուեալսն ի մի։ Եւ յամենայն կողմանց նեղութիւնք եւ վիշտք պատեալ պաշարել էին շուրջ զմեօք եւ վճարեցաւ բանն Ամովսաժնայն թէ ահ եւ գութ եւ որոգայթ ի վերայ ձեր բնակիչք երկրի...»։ (էջ 39)։

Ընդգծված բառերը ցույց են տալիս, որ Դարանաղցու նախագաղափար օրինակը և նրանից երկրորդված տարբերակները երկու կարևոր այլընթերցված ունեն մայր ձևագրից։ Ինչպես Չամչյանի օգտագործած տարբերակը, այնպես էլ նախագաղափար օրինակից երկրորդված մյուս գրչագրերը, Դարանաղցու մայր ձևագրից տարբերվում են իրենց կառուցվածքով, լեզվական ու ոճական առանձնահատկություններով։ Որպես կանոն, ընդօրինակություններն ավելի սեղմ են, զուրկ մայր ձևագրի կենդանի, հետաքրքիր ու աշխույժ լեզվից, ինչպես նաև նրա ավերորդ խորհրդածություններից։

Մեզ թվում է, որ Չամչյանի համար սկզբնաղբյուր ծառայած Դարանաղցու նախագաղափար օրինակից երկրորդված նույն տարբերակն ունեցել է նաև

Ալիշանը, որից օգտվել է: Դժբախտաբար, Ալիշանը մատնացույց չի անում իր ձեռքի տակ եղած աղբյուրը: Սակայն այն հանգամանքը, որ թե՛ Չամչյանի և թե՛ Ալիշանի օգտագործած տարբերակները դրեթե նույնական են և երկուսն էլ ժամանակագրության հեղինակ են համարում Գրիգոր ժամանակագրին, խոսում է այն մասին, որ, իրոք, Վենետիկի Մխիթարյան Մատենադարանում գտնվող Դարանաղցու ժամանակագրության նախագաղափար օրինակից ընդ-օրինակված միևնույն տարբերակն է հիմք ծառայել նրանց համար³⁴, Չամչյանի և Ալիշանի օգտագործած համապատասխան հատվածների միջև եղած տարբերությունները պետք է բացատրել նրանով, որ առաջինը կատարում է ոչ թե բառացի մեջբերումներ, այլ վերապատմում, իսկ որոշ դեպքերում էլ համառոտում կամ ընդարձակում է սկզբնաղբյուրի բովանդակությունը: Հենց այսպես է նա վարվում Բաբերդի Օձտեղ գյուղում տեղի ունեցած միջադեպի նկարագրության հատվածում³⁵, Ըստ որում, ձեռագրերում հանդիպող այս հատվածը նույնպես մի այլընթերցված ունի Դարանաղցու մայր ձեռագրից: Այսպես՝ նախագաղափար օրինակից երկրորդված այդ տարբերակներում որպես անատուններ գողացող և պասին միս ուտող հանդես է գալիս «Կիև մի ի գիւղն Օձտեղ»³⁶, իսկ մայր ձեռագրում «Երկու կիւ...ի գիւղն որ Օձտեղ կոչի»³⁷:

Այն հանգամանքը, որ Մ. Չամչյանը ջալալիների ապստամբության, Սրապիոն Ուսայեցու կաթողիկոս դառնալու և XVII դ. սկզբների պատմության հարցերի շարադրման ժամանակ այլևս չի օգտվում Դարանաղցու ժամանակագրությունից, խոսում է այն մասին, որ նրա ձեռքի տակ եղած Դարանաղցու նախագաղափար օրինակից երկրորդված տարբերակը վերջացել է «հզոբ և որոգայթ...» հատվածով, այսինքն՝ 1603 թ. դեպքերի նկարագրությունը³⁸:

Այսպիսով՝ շարադրվածը հիմք է տալիս ասելու, որ XVI դ. վերջերի և XVII դ. սկզբների Հայաստանի պատմության շարադրման համար Մ. Չամչյանի օգտագործած սկզբնաղբյուրներից մեկը՝ Գրիգոր աբեղայի Տարեգրությունը, Գրիգոր վարդապետ Դարանաղցու ժամանակագրության նախագաղափար օրինակն է:

ГРИГОР ДАРАНАГЦИ—ИСТОЧНИК ИСТОРИИ М. ЧАМЧЯНА

А. А. УТУДЖЯН

Р е з ю м е

Особый интерес среди источников, использованных М. Чамчяном для истории Армении конца XVI-го начала XVII вв., представляет летопись иеромонаха Григора. Анализ цитат, приведенных Чамчяном из ука-

34 Հմմտ. Մ. Չամչյան, էջ 535, Ղ. Ալիշան, Հայապատմում, մասն Բ, էջ 595:

35 Մ. Չամչյան, էջ 535, հմմտ. ձեռ. № 1151, էջ 225բ, Ս. Անեցի, էջ 202, Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 598, Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 211 և այլն:

36 նույն տեղում:

37 Գ. Դարանաղցի, էջ 36:

38 նույն տեղում, էջ 38:

данного источника, показывает, что речь идет о сочинении известного историографа XVII в. архимандрита Григора Даранагци (Камахеци) «Хронология», которая около двухсот пятидесяти лет оставалась неизвестной армяноповедам. Отрывок из сочинения Даранагци, использованный Чамчяном, встречается также в ряде рукописей, хранящихся в Ереване, Иерусалиме, Венеции. Исследование показывает, что эти отрывки являются вариантами, переписанными с начального образца сочинения Даранагци.

Таким образом, М. Чамчяном использована не основная рукопись сочинения Даранагци, которая, как известно, была написана в 1634—1640 гг. в Родосто, а первоначальный вариант данного сочинения, написанный, по нашему мнению, до 1608 г. в Константинополе. С него и переписаны все известные тексты.